ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

30.04.2014թ.
217-ի 4

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն պարոն Արթուր Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" ՊՈԱԿ-ն անցկացրել է մրցույթ՝ գլխավոր մասնագետի, գնումների եւ պայմանագրերի կառավարման ղեկավարի, տեղամասային ինժեների, ավագ տեղամասային ինժեների, իրավական հարաբերությունների խորհրդատու/գլխավոր իրավաբանի, ֆինանսատնտեսական ղեկավար/գլխավոր հաշվապահի, հաշվապահական հաշվառման եւ վճարումների մասնագետի, տրանսպորտային ոլորտի ինժեներ/տնտեսագետի, պայմանագրերի կառավարման մասնագետի, բողոքների եւ վեճերի կառավարման մասնագետի, կարողությունների զարգացման, մոնիտորինգի եւ արտաքին կապերի ղեկավարի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ովքե՞ր են ճանաչվել հաղթող վերոնշյալ յուրաքանչյուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթում,
2. Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր պաշտոնը զբաղեցնելու համար հաղթած անձանց կենսագրական տվյալները (CV-ները):

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Սույն հարցման կարգավիճակին կարող եք առցանց հետեւել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.givemeinfo.am կայքում՝ հետեւյալ հղմամբ՝ http://givemeinfo.am/hy/case/1357/:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան